ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/29684-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-320-29.06.2022-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի սեպտեմբերի 5 - ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1018 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-320-29.06.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-320-29.06.2022-ՏՀ-011/0) վերաբերյալ ստորև ներկայացնում է իր առաջարկությունները:

I. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում (այսուհետ՝ օրենսգիրք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ նաև՝ օրենսգիրք) 158-րդ հոդվածի 43-րդ պարբերությունում «հինգհարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկի և ստուգմանը նախորդող եռամսյակի տվյալ հասցեում ՀԴՄ-ներով արձանագրված շրջանառության 0.5 տոկոսի չափով, որի վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է պետական եկամուտների կոմիտեն» բառերով, իսկ 2-րդ հոդվածով՝ օրենսգրքի 158-րդ հոդվածի 44-րդ պարբերությունում «հազարապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկի և ստուգմանը նախորդող եռամսյակի տվյալ հասցեում ՀԴՄ-ներով արձանագրված շրջանառության 1 տոկոսի չափով, որի վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է պետական եկամուտների կոմիտեն չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված կարգով» բառերով: Հարկ է նկատել, որ նախագծի 1-ին հոդվածով սահմանվում է, որ ՀԴՄ-ներով արձանագրված շրջանառության վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է Պետական եկամուտների կոմիտեն, մինչդեռ նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտ տեղեկությունները տրամադրում է Պետական եկամուտների կոմիտեն՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված կարգով: Նման պայմաններում ակնհայտ է, որ վերոգրյալ երկու դրույթներում միևնույն հարցի վերաբերյալ առկա են տարբերակված մոտեցումներ:

Հաշվի առնելով, որ նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվել է, որ հարկային գաղտնիք համարվող տեղեկատվությունը տրամադրվում է տեսչական մարմնի և հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված կարգով, իսկ 1-ին հոդվածով սահմանված չէ նշված տեղեկատվության տրամադրման կարգը, նկատի ունենալով պետական մարմիններին հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրման կարգը

սահմանված է ՀՀ կառավարության 03.10.2002 թ. N 1584-Ն որոշմամբ, առաջարկում ենք քննարկել նախագծի 1-ին հոդվածով նախատեսված տեղեկությունների տրամադրման կարգը հստակեցնելու հարցը:

Միաժամանակ, նախագծի 1-ին հոդվածում կիրառվում է «պետական եկամուտների կոմիտե» ձևակերպումը, իսկ նախագծի 2-րդ հոդվածում՝ «հարկային մարմին»: Առաջարկում ենք ձևակերպումները համապատասխանեցնել միմյանց:

2. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներով առաջարկվում է հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքը տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով չիրականացնելու և (կամ) չափագիտական կանոնները և նորմերը խախտելու համար նախատեսված տուգանքի հաշվարկման նոր կարգ, մասնավորապես՝ ֆիքսված գումարի և ՀԴՄ-ներով արձանագրված շրջանառության համապատասխանաբար 0.5 տոկոսի կամ 1 տոկոսի չափով: Գտնում ենք, որ նման ձևակերպմամբ կարգավորում նախատեսելու արդյունքում կարող է տպավորություն ստեղծվել, որ վարչական պատասխանատվություն կիրառելու մասին որոշումը կարող է ունենալ երկու կետ՝ ֆիքսված գումարի (նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկ) և ՀԴՄ-ներով արձանագրված շրջանառության համապատասխանաբար 0.5 տոկոսի կամ 1 տոկոսի չափով նշանակված տուգանքը: Կարծում ենք, որ նշված մոտեցումը խնդրահարույց է, և առավել նպատակահարմար է կիրառել տուգանք՝ կախված միայն շրջանառության չափից՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինների կողմից նշանակվող վարչական տույժի տեսակները կամ չափերը և կիրառվող վարչական հարկադրանքի օժանդակ միջոցները պետք է համապատասխանեն կատարված վարչական իրավախախտման բնույթին, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին, պիտանի, անհրաժեշտ և համարժեք լինեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդող նպատակին հասնելու, անձի մոտ իրավահպատակ վարքագիծ ձևավորելու ու նոր վարչական իրավախախտումները կանխելու համար:

Նույնը վերաբերում է նաև նախագծի 4-րդ հոդվածով լրացվող օրենսգրքի 188-րդ հոդվածի 10-րդ պարբերությամբ սահմանվող տուգանքին:

3. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել լիազորող նորմ չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական և հարկային մարմինների համար: Այդ կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ հարկային մարմնի լիազորությունները հստակ թվարկված են Հարկային օրենսգրքի 36-րդ հոդվածով, իսկ չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի 21-րդ հոդվածով:

4. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է օրենսգրքի 158-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 47-րդ պարբերությամբ՝

1) «(...) ցուցանակի վնասման, թաքցնելու կամ դրա տեսանելիությունը նվազեցնելու կամ խոչընդոտելու դեպքում առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

Սույն կարգավորման հետ կապված լրացուցիչ պարզաբանման կարիք ունի՝ արդյո՞ք ցուցանակը առանց չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համաձայնության հեռացնելու համար անձը ենթակա է պատասխանատվության այն պայմաններում, երբ նորմում զանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումները սպառիչ կերպով թվարկված են: Ընդ որում, չնայած նորմի համակարգային վերլուծության արդյունքում հնարավոր է հանգել նման մեկնաբանության, այնուհանդերձ, քանի որ դրույթում սահմանվում է նոր իրավախախտում, առաջարկում ենք քննարկել նկարագրված դեպքը օբյեկտիվ կողմում առանձին նախատեսելու հարցը: Միաժամանակ հայտնում ենք, որ անորոշ ձևակերպում է «ցուցանակի տեսանելիությանը խոչընդոտելը կամ թաքցնելը», լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի «տեսանելիության նվազեցման» եզրույթը, ըստ երևույթին այդքան էլ պարզ չէ, թե ինչպես է տնտեսավարող սուբյեկտը «խոչընդոտելու տեսանելիությունը»: Այս իմաստով անհրաժեշտ է նաև լրամշակել ցուցանակին ներկայացվող պահանջները: Ինչպես պետք է այն տեղակայվի, ինչ ձևով և ինչ մակերեսով, ինչպես նաև հարկ է հստակեցնել, թե ինչ ընթացակարգով է լիազոր մարմինը հաստատելու ցուցանակը.

2) «...ղեկավարի կամ ծառայողի կարգադրագրերի... չկատարելը»: Այս իմաստով պարզ չէ, թե ինչպես պետք է լիազոր մարմնի ծառայողը կարգադրագիր ներկայացնի, ինչ գործառույթներով օժտված պետք է լինի տվյալ ծառայողը, որպեսզի կարողանա կարգադրագիր տալ: Ուստի «ծառայողի կարգադրագրեր» բառերն առաջարկում ենք փոխել «ծառայողի հանձնարարականներ (կարգադրագրեր)» բառերով, ինչպես նախատեսված է «Ստուգումների կազմակերպման մասին» օրենքի 6-րդ հոդվածում:

5. Նախագծի 1-ին հոդվածի «արձանագրված» բառն անհրաժեշտ է փոխարինել «իրացման» բառով՝ նկատի ունենալով Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 50-րդ կետի դրույթները:

6. Նախագծի 1-ին հոդվածում «ՀԴՄ» հապավումն առաջին կիրառման ժամանակ անհրաժեշտ է նշել ամբողջական, դրանից հետո՝ կրճատ տարբերակով:

7. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «հասցեում» բառն առաջարկում ենք փոխարինել «գործունեության իրականացման վայրում» բառերով:

8. Նախագծի 1-ին հոդվածում կիրառվում է «պետական եկամուտների կոմիտե» ձևակերպումը, իսկ նախագծի 2-րդ հոդվածում՝ «հարկային մարմին»: Առաջարկում ենք ձևակերպումները համապատասխանեցնել միմյանց:

II. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում (այսուհետ՝ օրենք) լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 9-րդ հոդվածում լրացվող 17.3-րդ մասով նախատեսվում է. «Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում թերլիցքավորում հայտնաբերվելու փաստով տուգանք նշանակելու մասին վարչական ակտի անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում բաշխիչ կայանների վրա, վարորդին տեսանելի հատվածում չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը մեկ ամիս ժամկետով փակցնում է «ՄԵՆՔ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆՔ ԹԵՐԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ» ցուցանակ: Ցուցանակի ձևը և

տեղադրման կարգը հաստատում է չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը:»:

Այս առումով հարկ է նշել, որ՝

1) Տեսչական մարմնի լիազորությունները սահմանված են «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի 21-րդ հոդվածով, ուստի «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով Տեսչական մարմնին ցուցանակ փակցնելու իրավասությամբ օժտելը խնդրահարույց է: Միևնույն ժամանակ պարզ չէ, թե նման գործառույթ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում նախատեսելու դեպքում ինչ վերահսկողական մեխանիզմներով են դրանք իրականացվելու.

2) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 59-րդ հոդվածը կարգավորում է վարչական ակտի ընդունման մասին իրազեկման (վարչական ակտի հանձնման և հրապարակման) հետ կապված հարաբերությունները: Օրենսդիրը նախատեսել է, որ վարչական ակտի հրապարակումը կատարվում է կամ վարչական մարմնի տեղեկագրում կամ այլ պաշտոնական տեղեկագրում հրատարակելով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով (օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերություն): Ընդ որում, մամուլում, զանգվածային լրատվության այլ միջոցներում կամ տեղեկատվության տարածման այլ միջոցներում հրապարակվում է գրավոր վարչական ակտի եզրափակիչ մասը: Նման եղանակով հրապարակման մեջ պետք է նշվի, թե որտեղ կարելի է ամբողջությամբ ծանոթանալ վարչական ակտին, այդ թվում՝ դրա հիմնավորմանը (օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերություն): Այսինքն, ցուցանակը, դիտարկելով որպես վարչական տույժի ենթարկվելու մասին տեղեկատվության տարածման այլ միջոց, պետք է պարունակի տեղեկություն վարչական ակտի եզրափակիչ, վարչական ակտի հիմնավորման մասին, ինչպես նաև պետք է նշվի, թե որտեղ կարելի է ամբողջությամբ ծանոթանալ վարչական ակտին: Հետևապես, եթե ցուցանակի տեղադրումը միտված է տնտեսավարող սուբյեկտի՝ թերլիցքավորման համար վարչական տույժի ենթարկվելու մասին հանրության իրազեկմանը, ապա ցուցանակի բովանդակությունը պետք է համապատասխանեցվի օրենքով նախատեսված պահանջներին: Իսկ եթե ցուցանակի տեղադրումը դիտարկվում է որպես վարչական տույժի տեսակ, ապա հարկ ենք համարում նշել, որ վարչական տույժի տեսակները սպառիչ կերպով թվարկված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 23-րդ հոդվածում, որտեղ «ցուցանակի տեղադրում»-ը նախատեսված չէ որպես վարչական տույժ: Ուստի ցուցանակի տեղադրման էության նման մեկնաբանման դեպքում անհրաժեշտ է լրացում կատարել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 23-րդ հոդվածում.

3) «ՄԵՆՔ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆՔ ԹԵՐԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ» ցուցանակի տեղադրումը ոչ նպատակարմար է և խախտում է տնտեսավարող սուբյեկտի մի շարք իրավունքներ: Եթե տնտեսավարող սուբյեկտն իրականացնում է թերլիցքավորում, ապա տվյալ իրավախախտումն արդեն իսկ ենթակա է տուգանքի, ուստի հասկանալի չէ, թե ինչի է պետք տնտեսավարող սուբյեկտին ենթարկել հանրային պարսավանքի և հանրության սեփականությունը դարձնել վերջինիս տուգանված լինելու փաստը: Այս պարագայում և՛ տուգանքի նշանակումը, և՛ հանրային պարսավանքը հանդիսանում են միևնույն իրավախախտման երկու տարբեր պատիժներ: Հարկ է նաև նշել, որ վերոգրյալ կարգա-

վորմամբ նախատեսվում է միայն ցուցանակի ձևը և տեղադրման կարգը հաստատելու մասին չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, սակայն կարգավորված չեն ցուցանակը հեռացնելու հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ ո՞վ է պատասխանատու սահմանված ժամկետի ավարտից հետո ցուցանակը հեռացնելու համար կամ ի՞նչ հետևանքներ կարող են առաջանալ ցուցանակը ժամկետի ավարտից հետո չհեռացնելու համար: Ավելին, որքանով է նպատակահարմար փակցնել վերը նշված ցուցանակը մեկ ամիս ժամկետով: Այս ժամկետը լիովին բավարար է տնտեսավարող սուբյեկտին վնաս պատճառելու համար: Տվյալ նշումը կարող է հանգեցնել հաճախորդների հոսքի նվազեցմանը, ինչն անխուսափելիորեն բերելու է տնտեսավարող սուբյեկտի եկամուտների պակասեցմանն ու բաց թողնված օգուտին:

2. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է ցուցանակը փակցնել վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո, մինչդեռ՝ նախագծի 1-ին հոդվածով ցուցանակի փակցնելը նախատեսվում է տուգանք նշանակելու մասին վարչական ակտի անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում: Կարծում ենք՝ պարզաբանման և վերանայման կարիք ունի վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո ցուցանակը փակցնելու վերաբերյալ կարգավորումը:

3. Նախագծի 3-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտները (ըստ հասցեների) պարտավոր են ունենալ չափագիտության բնագավառում իրենց մոտ իրականացված նախորդ ստուգումների ժամկետների, արդյունքների մասին տեղեկատվություն պարունակվող QR կոդեր: Այս առումով հստակեցման կարիք ունի, թե ում կողմից պետք է վարվի QR կոդերում պարունակվող տեղեկատվու-թյան պարբերաբար թարմացումը: Անդրադառնալով նախագծի 3-րդ հոդվածով 9-րդ հոդվածում լրացվող 25-րդ մասի բովանդակությանը, որով նախատեսվում է «տնտեսավարող սուբյեկտների կողմից չափագիտության բնագավառում իրենց մոտ իրականացված նախորդ ստուգումների ժամկետների, արդյունքների մասին տեղեկատվություն պարունակող QR կոդեր», հարկ ենք համարում նշել, որ սույն պահանջն անորոշ է: Բովանդակությունից պարզ չէ, թե տվյալ կարգավորումը ում է պետք. տնտեսավարող սուբյեկտի՞ն, թե պետական լիազոր մարմնին: Ցանկացած ստուգման արդյունք հասանելի է պետական լիազոր մարմնին, իսկ «Ստուգումների կազմակերպման մասին» օրենքի 8-րդ հոդվածը հստակ սահմանում է ստուգումն իրականացնող անձի կողմից ստուգման ընթացքում իրեն հայտնի դարձած տնտեսավարող սուբյեկտների գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության չհրապարակման պահանջը: Այս իմաստով, հասկանալի չէ, թե ինչ նպատակ է հետապնդում QR կոդերի միջոցով արդյունքների մասին տեղեկատվության հասանելիություն ապահովել և հատկապես, առանց տնտեսավարող սուբյեկտի համաձայնության:

Հարկ ենք համարում նշել նաև հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝

1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:

Նկատի ունենալով, որ նախագծերի փաթեթի ընդունմամբ անհրաժեշտություն է առաջանալու ընդունել այլ ենթաօրենսդրական ակտեր, ուստի անհրաժեշտ է նախագծերի անցումային դրույթներում նախատեսել դրանցում նախատեսված մարմինների կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետները՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներից:

Ավելին, նախագծերով առաջարկվող կարգավորումների լիարժեք կիրարկումն ապահովելու նպատակով առաջարկում ենք նախագծերի ուժի մեջ մտնելու համար սահմանել այնպիսի ժամկետ, որի ընթացքում հնարավոր կլինի ընդունել նախագծերից բխող իրավական ակտերը՝ այդ մասին ուղղակիորեն նախատեսելով անցումային դրույթներում:

Առաջարկում ենք նաև սահմանել նախագծերից բխող պահանջների խախտման համար իրավական հետևանք. եթե օրենքի նորմը սահմանում է պարտադիր պահանջ, ապա օրենքում պետք է նախատեսվեն դրա խախտման համար իրավական հետևանքներ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված առաջարկությունների հիման վրա նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1018 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**» և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-320-29.06.2022-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.09.2022
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-320-29.06.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 158-րդ հոդվածի 43-րդ պարբերությունում՝«հինգհարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկի եւ ստուգմանը նախորդող եռամսյակի տվյալ հասցեում ՀԴՄ-ներով արձանագրված շրջանառության 0.5 տոկոսի չափով, որի վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է պետական եկամուտների կոմիտեն:» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 44-րդ պարբերությունում՝ «հազարապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկի եւ ստուգմանը նախորդող եռամսյակի տվյալ հասցեում ՀԴՄ-ներով արձանագրված շրջանառության 1 տոկոսի չափով, որի վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է պետական եկամուտների կոմիտեն չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի եւ հարկային մարմնի համատեղ հրամանով սահմանված կարգով:» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 158-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 47-րդ պարբերությամբ.

«Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 17.3 րդ մասով նախատեսված ցուցանակի վնասման, թաքցնելու կամ դրա տեսանելիությունը նվազեցնելու կամ խոչընդոտելու դեպքում առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 188-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 10-րդ պարբերությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի կամ ծառայողի կար-գադրագրերը վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո կրկին իրականացված ստուգմամբ չկատարելը՝

«առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի եւ ստուգմանը նախորդող եռամսյակի իրացման շրջանառության 0.5 տոկոսի չափով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-320/-29.06.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 17.3.-րդ մասով.

«17.3. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առեւտրի կետերում թերլիցքավորում հայտնաբերվելու փաստով տուգանք նշանակելու մասին վարչական ակտի անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում բաշխիչ կայաններիի վրա, վարորդին տեսանելի հատվածում չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը մեկ ամիս ժամկետով փակցնում է «ՄԵՆՔ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆՔ ԹԵՐԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ» ցուցանակ: Ցուցանակի ձեւը եւ տեղադրման կարգը հաստատում է չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 17.4.-րդ մասով.

«17.4. Օրենքի 9-րդ հոդվածի 17.3.-րդ մասով նախատեսված ցուցանակի վնասման, թաքցնելու կամ դրա տեսանելիությունը նվազեցնելու կամ խոչընդոտելու դեպքում վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո, բաշխիչ կայանների վրա չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը կրկին փակցնում է նույն ցուցանակը մեկ ամիս ժամկետով:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 25-րդ մասով.

«25. Տնտեսվարող սուբյեկտները (ըստ հասցեների) պարտավոր են ունենալ չափագիտության բնագավառում իրենց մոտ իրականացված նախորդ ստուգումների ժամկետների, արդյունքների մասին տեղեկատվություն պարունակող QR կոդեր: QR կոդերին ներկայացվող պահանջները եւ դրանց միջոցով արտացոլվող տեղեկատվության ձեւը սահմանում է ՀՀ կառավարությունը:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման առարկան

Նախագծերի կարգավորման առարկան վառելիքի շուկայում լցակայանների նկատմամբ տուգանքի արդարացի բաշխման համակարգի կիրառումն է՝ լցակայանի տվյալ հասցեում խախտման դեպքով պայմանավորված եւ լցակայանների կողմից իրականացվող թերլցումներից սպառողների իրավունքների պաշտպանությունը:

2. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու անհրաժեշտությունն առաջացել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն օրենսգրքի առկա հոդվածները պատշաճ կերպով չեն կարգավորում հեղուկ գազի, բնական գազի, բենզինի ու դիզվառելիքի սպառողների եւ վերը նշված վառելիքի տեսակները մատակարարողների միջեւ իրավահարաբերությունները: Մասնավորապես՝ ստուգաչափված չափման միջոցներով չապահովելու եւ (կամ) չափագիտական կանոնները, նորմերը խախտելու դեպքում վարչական տույժի նշանակման չափն ու վերջինիս նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում նախատեսված արարքը կրկնելու դեպքում կրկնակի տույժի չափը, ըստ էության, իրենցից ենթադրում են անհամաչափ կարգավորումներ՝ հաշվի առնելով տնտեսվարողների շրջանառության ծավալների տարբերություններն ու սպառողներին դրանցից բխող պատճառված վնասի չափը:

Ի լրումն, «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասում առկա կարգավորման մեխանիզմների համաձայն՝ սպառողների իրավունքների պաշտպանությունը չի կատարվում անհրաժեշտ մակարդակով, քանի որ սպառողները հեղուկ գազի, բենզինի, բնական գազի եւ դիզվառելիքի լցակայաններից օգտվելիս չունեն հանրային վերահսկողություն իրականացնելու գործիքակազմ եւ լցակայանների՝ նախկինում իրականացրած գործունեության վերաբերյալ տեղեկանալու հնարավորություն: Այսպիսով, տվյալ ոլորտում պատշաճ հանրային վերահսկողություն իրականացնելու առումով օրենքի առկա կարգավորումներն ամբողջական չեն:

Վերոնշյալ խնդիրները կարգավորելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կատարել մի շարք օրենսդրական փոփոխություններ:

Անհրաժեշտություն է առաջացել անցնել տուգանքի սահմանման առավել արդարացի բաշխման համակարգի, համաձայն որի՝ առաջարկվում է տուգանքը սահմանել կազմակերպության այն հասցեի/հասցեների վրա, որոնք կատարել են տվյալ խախտումը: Իսկ խախտման չափը սահմանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի եւ տվյալ հասցեում արձանագրված խախտման օրվան նախորդող եռամսյակի շրջանառության 0.5%-ի չափով: Անհրաժեշտ է նաեւ «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքում կատարել լրացումներ, ըստ որի՝ լցակայանների կողմից թերլցման դեպք հայտնաբերելու դեպքում չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը մեկ ամիս ժամկետով փակցնում է «ՄԵՆՔ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆՔ ԹԵՐԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ» ցուցանակ: Բացի այդ, օրենքի նախագծով տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են ունենալ չափագիտության բնագավառում իրենց մոտ իրականացված նախորդ ստուգումների ժամկետների, արդյունքների մասին տեղեկատվություն պարունակող QR կոդեր:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում եւ «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքում կատարել փոփոխություններ եւ լրացումներ նպատակ ունենալով օրենքները համապատասխանեցնել առկա իրավիճակին եւ մարտահրավերներին:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ծովինար Վարդանյանի եւ նույն հանձնաժողովի փոխնախագահ Բաբկեն Թունյանի կողմից:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Վերը նշված փոփոխությունները կապահովեն լցակայանների շրջանում տուգանքների սահմանման առավել արդարացի բաշխման համակարգ, որի միջոցով տուգանք կսահմանվի կազմակերպության այն հասցեների նկատմամբ, որոնք կատարել են տվյալ խախտումը՝ տուգանքի հաշվարկում ներառելով տվյալ տնտեսվարողի շրջանառությանը վերաբերող գործակից:

Հաջորդ կարգավորմամբ թերլցման փաստն արձանագրելուց եւ համապատասխան տուգանքը վճարելուց բացի տնտեսվարողների բաշխիչ կայաններիի վրա վարորդին տեսանելի հատվածում փակցվելու է «ՄԵՆՔ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆՔ ԹԵՐԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ» գրառմամբ ցուցանակ: Նման կարգավորումը միտված է տնտեսվարողի կողմից հնարավոր խախտումներ իրականացնելու կանխարգելմանը:

Մյուս փոփոխության միջոցով սպառողները կկարողանան, լցակայանից օգտվելիս QR կոդերի միջոցով մուտք գործել համակարգ եւ ծանոթանալ տվյալ լցակայանի ընդհանուր գործունեությանը, որի արդյունքում սպառողները կտիրապետեն լցակայանների գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը: Փոփոխությունները հնարավորություն կտան իրականացնել սպառողների իրավունքների անհրաժեշտ մակարդակով պաշտպանություն, ինչպես նաեւ կբարձրացնեն տնտեսվարողների գործունեության թափանցիկության մակարդակը: